

ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

ԶԵԿՈՒՅՑ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻԲԻՆԳԻ ՄԱՍԻՆ 2015Թ.

ՀԱՅԱՍՏԱՆ (ԽՈՒՄԲ 1)

30 հունիսի, 2016թ.

Հայաստանը սկզբնաղբյուր և, ավելի փոքր ծավալով, վերջնակետ երկիր է աշխատանքային և սեռական թրաֆիքինգի ենթարկվող տղամարդկանց, կանանց և երեխաների համար: Հայ կանայք և երեխաները ենթարկվում են սեռական ու աշխատանքային թրաֆիքինգը երկրի ներսում, ինչպես նաև սեռական թրաֆիքինգի Միացյալ Արաբական Էմիրություններում (ՄԱԷ) և Թուրքիայում: Հայաստանում սեռական թրաֆիքինգի են ենթարկել Չինաստանի քաղաքացի կանանց: Հայ տղամարդիկ հարկադիր աշխատանքի են ենթարկվում Ռուսաստանում և, ավելի փոքր ծավալով, Թուրքիայում: Հայ կանայք և երեխաները երկրի ներսում խոցելի են համարվում մուրացկանության մեջ ներգրավվելու տեսանկյունից: Որոշ երեխաներ երկրի ներսում աշխատում են գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների մատուցման ոլորտներում, որտեղ նրանք խոցելի են աշխատանքային թրաֆիքինգի մասով: Մարդկանց թրաֆիքինգի առումով խիստ խոցելի են մնում գյուղական բնակավայրերի կրթական ցածր մակարդակ ունեցող տղամարդիկ և սոցիալական խնամքի հաստատությունների երեխաները: Կոնֆլիկտի հետևանքով տեղահանված անձանց, այդ թվում՝ Հայաստանում բնակվող սիրիահայերի համար առկա է շահագործման ռիսկը և պարտքի դիմաց նրանք ենթարկվել են աշխատանքային շահագործման:

Հայաստանի կառավարությունն ամբողջությամբ բավարարում է թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին: 2015թ. հունիսին գործողության մեջ մտավ մի օրենք, որով միօրինականացվեցին թրաֆիքինգի կասկածյալ ու բացահայտված զոհերի նույնականացման, աջակցության, պաշտպանության և վերաինտեգրման ընթացակարգերը հանրապետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության համար: Այն նաև սահմանում է նույն իրավունքներն ու ծառայությունները թրաֆիքինգի ՀՀ և օտարերկրացի զոհերի համար, և ապահովում է աջակցության ցուցաբերումը զոհերին՝ անկախ իրավապահների հետ զոհի համագործակցությունից: Կառավարությունը շարունակել է ամուր համագործակցությունը հակաթրաֆիքինգային հասարակական կազմակերպությունների, տեղական լրատվամիջոցների, դոնոր կազմակերպությունների և տարածաշրջանային գործընկերների հետ: Կառավարությունը միջոցներ է հատկացրել զոհերին մատուցվող ծառայությունների համար և ապահովել է համաֆինանսավորում հասարակական կազմակերպության կողմից գործարկվող

թրաֆիքինգի գոհերի կացարաններից մեկին: Թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբը կանոնավոր նիստեր է գումարել՝ համակարգելու այդ ուղղությամբ կառավարությունում տարվող աշխատանքները: Կառավարությունը ապահովել է գոհերի նույնացման թեմայով ուսուցում ու նյութեր ուստիկանության աշխատակիցների, սահմանապահների համար, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ ուսուցում քրեակատարողական հիմնարկների աշխատողների համար: Ավելացել է թրաֆիքինգի գծով քննությունների թիվը, սակայն քրեական գործերի թիվը եղել է ավելի քիչ և փոքր-ինչ պակաս են եղել դատապարտումները: Դեռևս չկար տուժողների կամ վկաների պաշտպանության պաշտոնական մեխանիզմ:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ.

Բարելավել ջանքերը հարկադիր աշխատանքի գոհերի հայտնաբերման հարցում, այդ թվում նաև խորացնել գոհերի բացահայտման հետ կապված ուսուցումը պաշտոնյաների համար և աշխատանքային տեսուչներին օժտել կանոնավոր տեսչական ստուգումներ անցկացնելու ու անսպասելի ստուգայցերի միջոցով գոհերին բացահայտելու իրավասություններով և մեծացնել համագործակցությունն իրավապահների հետ. ընդունել գործողությունների նոր ազգային ծրագիր 2016-18թթ. համար. լիցենզավորել, կանոնակարգել ու ուսուցում ապահովել տեղական զբաղվածության ծառայությունների և գործակալների համար, որպեսզի նրանք կարողանան օգնել կանխել Հայաստանի քաղաքացիների հարկադիր աշխատանքն արտերկրում. ապահովել նրբանկատ վերաբերմունքին ուղղված ուսուցում դատավորների ու փաստաբանների համար՝ բարելավելու վերաբերմունքը գոհերի հանդեպ. աշխատել Ռուսաստանի իշխանությունների հետ հարկադիր աշխատանքի հայ գոհերին բացահայտելու և աշխատանքային թրաֆիքինգ իրականացնողների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հարցում. աշխատել հասարակական կազմակերպությունների հետ գտնելու ուղիներ Թուրքիայում հայ գոհերին բացահայտելու ու աջակցելու համար և ապահովելու վերաինտեգրումը. ընդունել օրենսդրություն տուժողների կամ վկաների պաշտպանության միջոցներ ձևավորելու համար. արդյունավետորեն մշակել և ներդնել թրաֆիքինգի գոհերի փոխհատուցման մեխանիզմներ. շարունակել իրազեկվածությանն ուղղված արշավները՝ հասցնելով գյուղական ու սահմանամերձ համայնքներ և սոցիալական խնամքի հաստատություններից դուրս եկող երեխաներին. և շարունակել ակտիվ գործընկերությունը քաղաքացիական հասարակության խմբերի հետ:

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆՂՈՒՄ

Կառավարությունը ապահովել է իրավապահ ջանքերի կայուն համեստ մակարդակ, սակայն պատկան մարմինների կողմից գրանցվել են թրաֆիքինգի գծով ավելի քիչ գործեր ու դատապարտումներ: Հայաստանի քրեական օրենսգրքի 132 և 132-2 հոդվածներով արգելվում է թե՛ սեռական, թե՛ աշխատանքային թրաֆիքինգը և այդ հոդվածներով նախատեսվում է 5-ից

15 տարվա ազատազրկում, ինչը բավարար խիստ և համարժեք պատիժ է այնպիսի ծանր հանցանքների համար, ինչպիսին է բռնաբարությունը: 2015թ. պատկան մարմինները հետաքննել են թրաֆիքինգի 14 նոր գործ (2014թ. քննվել է 10 նոր գործ), ընդ որում գործերից 4-ը առնչվում էին աշխատանքային թրաֆիքինգին: Մեռական թրաֆիքինգի հետ կապված 10 գործերից 6-ով քննությանը գործի հատկանիշները փոխվել են և ներկայացվել են բռնաբարության կամ մարմնավաճառության մեղադրանքներ, իսկ գործերից մեկը կարճվել է: Պատկան մարմինների կողմից մեղադրանք է ներկայացվել 2 հոգու, իսկ դատարանների կողմից 2015թ. թրաֆիքինգի համար դատապարտվել են 3 հոգի. համեմատության համար նշեք, որ 2014թ. մեղադրանք ներկայացվել է 7 հոգու և 7 հոգի էլ դատապարտվել են: Թրաֆիքինգ իրականացնելու համար դատապարտվածներից 2-ի համար սահմանվել է 11 տարվա ազատազրկում, իսկ 1-ի համար՝ 11.5 տարվա ազատազրկում:

Աշխատանքային թրաֆիքինգի գործերով քրեական հետապնդումները շարունակում էին դժվարություններ ստեղծել Հայաստանի քննիչների համար, քանի որ դեպքերի գերակշիռ մասը փաստացի տեղի էին ունենում Ռուսաստանում, որի հետ իրավապահ համագործակցությունը մնում է դժվարին: Կառավարությունը թրաֆիքինգի ու զոհերի նույնացման հարցերով ուսուցումներ է ապահովել 250 ոստիկանության աշխատակիցների ու նոր սահմանապահների համար: Արդարադատության նախարարությունը շարունակել է թրաֆիքինգին առնչվող հարցերը ներառել է քրեակատարողական հաստատությունների աշխատակիցների մարդու իրավունքների մասին պարտադիր ուսուցման ծրագրում: Կառավարության կողմից թրաֆիքինգին առնչվող հանցանքներում պետական պաշտոնյաների հանցակցության մասին քննությունների, հետապնդումների ու դատապարտումների մասին հաղորդումներ չեն եղել:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունը խորացրել է թրաֆիքինգի բացահայտված զոհերի պաշտպանությանն ուղղված ջանքերը: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին օրենքը 2015թ. հունիսից սկսել է գործել: Օրենքը հստակեցնում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության գործողություններն ուղղված թրաֆիքինգի ենթարկված անձանց նույնացմանն ու աջակցությանը: Օրենքը նաև սահմանում է, որ զոհերի աջակցությունը պետք չէ պայմանավորել իրավապահների հետ համագործակցությամբ և սահմանում է նույն իրավունքներն ու ծառայությունները ՀՀ քաղաքացի ու օտարերկրացի զոհերի համար: Օրենքով նախատեսված զոհերի փոխհատուցման մեխանիզմների ձևավորումը հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ դեռևս ավարտված չէր: Կառավարության կողմից 2015թ. ընթացքում պաշտոնապես նույնացվել են թրաֆիքինգի 3 տղամարդ և 6 կին զոհեր (11 զոհ 2014թ.-ին): Պատկան մարմինները նրանց բոլորին հայտնել են իրենց իրավունքների մասին, առկա ծառայությունների մասին, և զոհերից 5-ը օգտվել են հասարակական

կազմակերպության կողմից առաջարկվող կացարանից: Կառավարությունն աջակցել է հասարակական կազմակերպություններից մեկին աշխատանքային թրաֆիքինգի գոհ մի տղամարդու Ռուսաստան հայրենադարձելու հարցում. գոհը չի մնացել կացարանում և իրեն թրաֆիքինգի ենթարկողների դեմ ցուցմունք չի տվել: Թուրքիայում հայկական դեսպանատան բացակայությունը խոչընդոտ է հանդիսանում Թուրքիայում թրաֆիքինգի հայ գոհերի նույնացման հարցում: Ազգային անվտանգության ծառայությունը սահմանապահներին բաժանել է թրաֆիքինգի գոհերին աջակցելու վերաբերյալ 150 ձեռնարկներ:

2015թ. կառավարությունը թրաֆիքինգի գոհերին աջակցելու համար հատկացրել է 46.259.000 ՀՀ դրամ կամ 95.000 ԱՄՆ դոլար ու մասնակիորեն ֆինանսավորել է մի հասարակական կազմակերպության, որը կացարան է ապահովել 18 գոհի կամ խոցելի անձի, որոնցից 6-ը կացարան էին ուղղորդվել 2015թ. ընթացքում: Մեկ այլ հասարակական կազմակերպության կողմից գործարկվող կարճաժամկետ կացարանում աջակցություն են ստացել 7 գոհեր: Կառավարությունը և տեղական հասարակական կազմակերպությունները համատեղ բոլոր գոհերին ապահովել են իրավական, հոգեբանական աջակցություն և բուժօգնություն, կացարան և ներգրավել են նրանց տարբեր սոցիալական, կրթական և զբաղվածության ծրագրերում: Թրաֆիքինգի գոհերը պետական ծրագրի շրջանակում իրավասու են օգտվել անվճար բուժօգնությունից. հաշվետու ժամանակահատվածում այս ծառայություններից օգտվել են 2 գոհ: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ հասարակական կազմակերպությունների կողմից գործարկվող ապաստարաններում տեղավորված գոհերից պահանջվել է առանց ուղեկցության դուրս գալու դեպքում ապաստարանի անձնակազմին տեղյակ պահել այդ մասին, սակայն նրանք ազատ էին իրենց հայեցողությամբ հեռանալ ապաստարանից, եթե աջակցության կարիք այլևս չէին զգում: Ծառայություններն հավասարապես հասանելի են եղել թե՛ կին, թե՛ տղամարդ գոհերի համար: Անչափահասների համար առանձին ապաստարան չի եղել, սակայն այդ գոհերին հնարավոր է եղել տեղավորել թրաֆիքինգի չափահաս գոհերի ապաստարանում կամ ուղղորդել դեպի մանկական խնամքի սոցիալական հաստատություններ: Իրավական դաշտում տեղ գտած փոփոխության հետևանքով, որով 2015թ. հուլիսից կասեցվեցին աշխատանքային տեսչության գործառույթների գերակշիռ մասը, աշխատանքային տեսուչներն այլևս անկարող էին պարբերական ստուգայցեր կատարել ու բացահայտել աշխատանքային թրաֆիքինգի նշանները: Վերջին մի քանի տարիների ընթացքում գոհերը քննությունների ու քրեական հետապնդման հարցերում համագործակցելիս ավելի մեծ վստահություն են ունեցել իրավապահների նկատմամբ, այնուհանդերձ, դիտորդները փաստում են, որ գոհերը խուսափում են քննությանն աջակցելուց մի շարք պատճառներով, այդ թվում՝ վախը թրաֆիքինգ իրականացնողների հետագա հաշվեհարդարից: Կառավարությունը դեռևս չունի տուժողների կամ վկաների պաշտպանության պաշտոնական մեխանիզմ: Տուժողների կամ վկաների պաշտպանության վերաբերյալ 2014թ.-ին օրենքի նախագիծ ներկայացվեց խորհրդարան, սակայն հաշվետու ժամանակաշրջանի ավարտին այն դեռևս ընդունված չէր: 2015թ. չեն եղել հաղորդումներ թրաֆիքինգի նույնացված գոհերի անհարկի կալանավորման

մասին. թրաֆիքինգի ենթարկվելու հետևանքով գործած հանցանքների համար օրենքով քրեական հետապնդում չի նախատեսվում: Այնուհանդերձ, գրանցվել է մեկ միջադեպ, երբ ոստիկանությունը ենթադրյալ թրաֆիքինգ իրականացնողին տրամադրել է տեղեկություն գոհի գտնվելու վայրի վերաբերյալ. իրականացվել է ծառայողական քննություն և ոստիկանական բաժանմունքի ղեկավարության նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր:

ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Կառավարությունը շարունակել է մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված գործուն ջանքերը: Պետական տարբեր կառույցների կողմից իրականացվել են կանխարգելմանն ուղղված տարբեր ծրագրեր ու աշխատանքներ, թեպետ կառավարությունը նշում է, որ որոշ դիտորդների գնահատմամբ հանրային իրազեկման արշավներում թրաֆիքինգը բավարար հաճախ չի հիշատակվել: Ոստիկանությունը ներկայացրել է տեսանյութեր, մասնակցել թրաֆիքինգի հարցերին նվիրված հեռուստահաղորդումների: Ոստիկանությունը կազմակերպել է իրազեկման մեծացմանն ուղղված քննարկումներ դպրոցներում, սահմանը հատող, ինչպես նաև Միջին Արևելքում ու Եվրոպայում բնակվող հայերին բաժանվել են տեղեկատվական թերթիկներ թրաֆիքինգի վտանգների վերաբերյալ: Պետական կառույցները թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկություններ են զետեղել իրենց կայքերում, այդ թվում տեղեկություններ ոստիկանության կողմից գործարկվող թեժ գծի վերաբերյալ. թեժ գծին արված զանգերը հանգեցրել են կանխարգելիչ միջոցների ձեռնարկման ու հետաքննությունների: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբը կանոնավոր նիստեր է գումարել, հրապարակել զեկույցներ գործունեության վերաբերյալ և ձեռնամուխ է եղել 2016-18թթ. գործողությունների 5-րդ ազգային ծրագրի մշակմանը. գործողությունների նոր ծրագիրը հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ դեռևս ընդունված չէր: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով խորհուրդը տարվա մեջ միայն մեկ հանդիպում է ունեցել՝ պայմանավորված նախագահի հրաժարականով, սակայն հաշվետու ժամանակաշրջանի ավարտին նոր նախագահ արդեն նշանակվել էր: Կառավարությունը հակաթրաֆիքինգային ուսուցում է ապահովել իր դիվանագիտական աշխատակիցների և միջազգային խաղաղապահ ուժերի կազմում օտարերկրյա պետություններ ծառայության մեկնող զինծառայողների համար: